ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2018 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԾՁԲ-18/19

Սպիտակ համայնքի կարիքների համար չափագրման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԾՁԲ-18/19 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 18.10.2018թ. ժամը 16:31-ին ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 19.10.2018թ. տրամադրված պարզաբանումները՝

Հարցադրում N 1

Խնդրում եմ պարզաբանել…

Անհրաժեշտ է մատուցել Սպիտակ համայնքի «Վարպետաց» թաղամասի (ընդհանուր 33,366 հեկտար) չափագրման ծառայություններ: Չափագրման ենթակա են թաղամասում գտնվող ճանապարհները, փողոցները, փակուղիները, անցումները, բնակելի տները (220 տուն) և տնամերձ հողամասերը (220 հողակտոր):

1.Բնակելի տները ներքին մակերեսով, թե հասկանալ որպես «Վարպետաց» թաղամասի գլխավոր հատակագիծ

Պարզաբանում N 1

Անհրաժեշտ է՝

1. կազմել Սպիտակ համայնքի «Վարպետաց» թաղամասի գլխավոր հատակագիծ.
2. Չափագրումից հետո թաղամասը ենթակա է պետական գրանցման, ուստի հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվող չափագրման ծառայությունը անհրաժեշտ է իրականացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 20.10.2011թ. թիվ 284-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

Միաժամանակ հայտնում ենք, որ ելնելով բնակելի տների դասավորվածության առանձնահատկություններից հողամասերի սահմանազատման վերաբերյալ տեղեկատվությունը կտրամադրվի չափագրման ծառայության մատուցման ընթացքում:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել

ՀՀ ԼՄՍՀԳՀԾՁԲ-18/19 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Արսեն Ավետիսյանին:

Հեռախոս՝ 0255-2-25-00, 091-05-07-78:

Էլեկտրանային փոստ՝ arsenavetis@mail.ru:

ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԾՁԲ-18/19 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով